ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 15.02.2017թ. ԹԻՎ 80-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

02 մարտ 2017 թ,
ժամը 12:00

**Հանձնաժողովի նախագահ**
Խ.Միսակյան ՏՏԾ պետ
**Հանձնաժողովի անդամներ**
Հ.Նիկողոսյան ԱԱՏԿ ղեկավար

Վ.Աղաջանյանը չմասնակցեց հանձնաժողովի նիստին:

**ՕՐԱԿԱՐԳ**

ՀԱՆ(1)-ԾՀԱՊՁԲ-15/8-17 ծածկագրով <<Սերվերների>> ապրանքախմբում ընդգրկված ապրանքատեսակների գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացում և գնահատում:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը և հասցեն՝

- <<Լանս>> ՍՊԸ (հասցե՝ ք.Երևան Կոմիտաս 49)
- <<ԱՅՑՈՒՆԵԹՎՈՐՔՍ>> ՍՊԸ (հասցե՝ ք.Երևան Պուշկին38/1 55շ.)

1. Ծրարները կազմելու և ներկայացնելու տվյալների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ ծրարները կազմված և ներկայացված են համապատասխան սահմանված կարգին:

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա էին սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են սահմանված պահանջներին: Հանձնաժողովի նախագահ Խ.Միսակյանը հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ 5 400 000 ՀՀ դրամ: Այնուհետև հրապարակվեց և գնահատվեց մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, առանց ԱԱՀ: <<Լանս>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 4 160 000 ՀՀ դրամ, <<ԱՅՑՈՒՆԵԹՎՈՐՔՍ>> ՍՊԸ-ն 4 878 500 ՀՀ դրամ: <<ԱՅՑՈՒՆԵԹՎՈՐՔՍ>> ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը բարձր էր նախահաշվային գնից:

**Հանձնաժողովը միաձայն որոշեց՝**

1. Սույն ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Լանս>> ՍՊԸ
2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (նմանատիպ պայմանագիր), ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:
3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 13.03.2017թ. <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Խ.Սիսակյան — Հանձնաժողովի նախագահ

Հ.Նիկողոսյան — Հանձնաժողովի անդամ

Հ.Հակոբյան — Հանձնաժողովի քարտուղար